ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1951 *Общественные науки*

Գ. Սահակյան

Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻ ՈՒՇԱԳՐԱՎ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ռևոլուցիոն-դեմոկրատ Մ. Նալբանդյանը խոշոր ազդեցություն է թողել հայ հասարակական մտքի վրա։ Ցարական ինքնակալության ու սուլթանական բռնապետության դեմ պայքարող հայ ազատատենչ երիտասարդության համար Մ. Նալբանդյանը եղել է պայքարի դրոշ։ Ուշագրավ է այն տևական, գաղափարական ազդեցությունը, որ նա ունեցել է թյուրքական դաժան կարգերի տակ տառապող հայ ժողովրդի առաջավոր ներկայացուցիչների վրա։

Հայտնի է, որ Նալբանդյանը դեռևս «Հյուսիսափայլի» էջերից ծանոթ էր Պոլսի առաջավոր հայ ինտելիգենցիային, իսկ Պոլիս կատարած երկու ուղևորությունների ընթացքում (1860—1861 թթ.) այն աստիճան մեծացավ նրա համախոհների, համակիրների թիվը, որ ռեակցիոն խավերը երկյուղով էին լսում Նալբանդյանի անունը։

Թե Նալբանդյանի նկատմամբ ինչպիսի մեծ սեր ու համակրանք է եղել Պոլսի առաջավոր ինտելիգենցիայի շրջանում, և առհասարակ աշխատավոր ժողովրդի մեջ, անգամ հեռավոր գավառներում, երևում է «Մեղվի» էջերում հրապարակված հոդվածներից, գավառներից ստացված թղթակցություններից, որոնք տպագրված են ժամանակի պարբերական մամուլում։

Հ. Սվաճյանը Նալբանդյանի ձերբակալության առթիվ գրում էր, որ նրա ձերբակալության լուրը անսահման վիշտ է պատճառում ոչ միայն նրա ծնողներին, եղբայրներին ու քույրերին, այլև ամբողջ հայ ժողովրդին («լման ազգին»)։

«Որոնք որ զինքը և իր գործերն ու վարքը լավ ճանչեցին, կը դողային իր վրա իբրև իրենց աչքին լուսին վրա»[1], գրում էր «Մեղուն»։

Նալբանդյանին իրենց աչքի լույսի պես սիրող մարդկանց մասին խոսում էր ոչ միայն պրոգրեսիվ մամուլը, այլև ռեակցիոն մամուլը։ Այդ առթիվ, «Երևակիա» գրածներն արդեն հայտնի են Նալբանդյանագիտությանը։

Մի այլ ռեակցիոն պարբերականի՝ «Արևելյան դարի» էջերում էլ մենք հանդիպում ենք տողերի, որոնք վկայում են, թե Նալբանդյանը մտերիմների ինչպիսի լայն շրջանակ է ունեցել։

«Արևելյան դարը» Նալբանդյանի «Երկու տող» աշխատության լույս ընծայման առթիվ գրած հոդվածում Նալբանդյանին համարելով քրիստոնեությունից հեռացած, «օտար» գաղափարներ պաշտպանող մի «հեթանոս», «անհավատ» մարդ, իսկ նրա «Երկու տողը» «սադայելական մի աշխատություն», անում է կարևոր խոստովանություններ։

Նախ այդ հոդվածից իմանում ենք, որ «Երկու տողի» լույս ընծայու-

[1] «Մեղու», 1862, № 20։

մից մի քանի ամիս առաջ Պոլսի ինտելիգենցիան, թե պահպանողական-ները և թե պրոգրեսիվ մտածողները գիտեին, որ Նալբանդյանը պատրաստում է նման մի աշխատություն, կարծիքներ էին փոխանակում, վիճում։ Ոմանք պատրաստվում էին արժանավայել կերպով ընդունելու այն, ուրիշները պատրաստվում էին քննադատությամբ հանդես գալու։ «Արևելյան դարը» գրում է. «Հակե մեկ ու կես ամիս առաջ կերպիվ մը նախաձանոթ իսկ եղյալ էինք, որ ինչպես օր մը դիպվածով ամենուն ծանոթ եղած տեղ մը գտնված տաեննիս, հոն ներկա եղող քանի մը փորձիչ Նալբանդյանացեղ ռնձինք զմեզ ի քննին արկանելու համար հարցուցեր էին մեզի թե արդյոք Պ. Զամուռճյան պատվելույն դեմ գրություն մը եղած ժամանակ պիտի պաշտպանենք, կամ ընդհակառակը, պիտի պախարակենք զնա... Եվ սակայն այն տաեննեն ի վեր սաստիկ հետաքրքրությամբ մը կսպասեինք այս բանին գործնականապես հառաջ գալուն»[1]։ (Ընդգծումները մերն են.— Գ. Ստ.։)

Ովքե՞ր են եղել արդյոք «Արևելյան դարի» ակնարկած այդ «փորձիչ Նալբանդյանացեղ» մարդիկ, որոնք մտքեր են նախապատրաստել նախքան «Երկու տողի» այնտեղ հասնելը, ագիտացիա են արել նրա օգտին։ Արդյոք նրանք սոսկ Նալբանդյանով հիացողնե՞ր են, թե՞ շատ ավելի սերտ կապերով կապված են եղել «Երկու տողի» հեղինակի հետ։ Այս մասին էլ ուշագրավ խոստովանություն ունի «Արևելյան դարը»։ Նա գրում է, որ չնայած «Երկու տողի» ճակատին «Միայնակ Նալբանդյանց հեղինակությունը դրոշմված է, սակայն, եթե անոր խոսքերուն հետազոտաբար ուշադրություն ըլլի, անշուշտ ուրիշ այլևայլ ծածկյալ, բայց ծանոթ անուններ ալ իր հետը պիտի տեսնվին»[2]։

Ապա, ավելի մասնավորացնելով իր խոսքը, «Արևելյան դարը» սերտ կապ է գտնում «Երկու տողի» և «Մեղվի» քարոզած գաղափարների միջև, այն տարբերությամբ, որ «Մեղուն» գրում է Պոլսի ոճով, Նալբանդյանցը՝ «Ռուսաստանի ոճով»։

Վերոհիշյալ բոլոր մեջբերումները ցույց են տալիս, թե Նալբանդյանը մտերիմների կամ համակիրների ինչպիսի մեծ շրջանակ ուներ Պոլսում, որոնք նրա բանտարկության ու աքսորի լուրը դիմավորեցին մեծ վշտով[3]։

Նալբանդյանի ձերբակալության առթիվ Հ. Սվաճյանի գրած հիշյալ հոդվածում ուղղակի կոչ էր արվում վրեժ լուծել, եթե Նալբանդյանը անպարտ չարձակվի։ Հայտնի է նաև, թե Նալբանդյանի մահվան լուրը ինչպիսի անհուն վշտով լսեցին «Մեղվի» շուրջ համախմբված մարդիկ և ինչպիսի սրտառուչ տողերով արձագանքեցին մամուլում։

Ահա նույն այդ «փորձիչ Նալբանդյանացեղ» մարդիկ ցանկանում են, չնայած սուլթանական և հայ ռեակցիայի մոլեգնությանը, 1867 թ. մարտ ամսին նշել Մ. Նալբանդյանի մահվան առաջին տարեդարձը։

---

[1] «Արևելյան դար», 1861 թ., № 24։

[2] Նույն տեղում։

[3] Առաջավոր այդ մտածողների հետ Նալբանդյանի ունեցած կապերի մասին ավելի ընդարձակ տես՝ Ա. Մակարյան—«Մ. Նալբանդյանը և արևմտահայ դեմոկրատիան», Երևան, 1946 թ.։ Դ. Ստեփանյան—«Մ. Նալբանդյանի երկրորդ ուղևորության հետ կապված մի քանի հարցեր»։ Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր», 1949, № 9։

Այդ մտքով խանգավառված էին ոչ միայն «Մեղվի» շուրջ համախմբված մարդիկ, այլև «Արևելյան թատրոնի» ռեժիսորական և դերասանական խմբից շատերը, որոնք դրանից մի հնգամյակ առաջ, 1861 թվի աշնանը, «Արևելյան թատրոնի» առաջին ներկայացման օրը, առիթ էին ունեցել լսելու Նալբանդյանի հոյակապ ճառը հայ թատրոնի մասին, ծափահարելու նրան, արժանանալու նրա գովասանքներին ու խրախուսանքներին։

«Մեղվի» շուրջ համախմբված այդ մարդիկ ինչ ծրագրով են ցանկացել հավերժացնել Նալբանդյանի հիշատակը։ Մ. սուլթանական ցենզուրայի պայմաններում է հնարավոր եղել հրապարակել տարբերթ կազմակերպողների ծրագիրը, ոչ էլ Թիֆլիսի մամուլում են պահպանվել դրա արձագանքները։ Պարզ է մի բան՝ նրանք ցանկացել են թատերական մի երեկո կազմակերպել։

Այս երեկույթին երկար նախապատրաստական աշխատանք է կատարվել։ «Արևելյան թատրոնի» դերասան-դրամատուրգներից մեկը՝ Ռ. Սեմեֆճյանը,—որը 1861 թվի առաջին ներկայացման ժամանակ կատարել էր հուշարարի պաշտոն,—գրում է հատուկ մի ողբերգություն՝ «Վարդան, փրկիչ հայրենյաց» վերնագրով։ Կոմպոզիտոր Տ. Զուխաճյանը գրում է երաժշտություն այդ ողբերգության համար։

Երեկոյի առաջին մասի ծրագիրն է դառնում հիշյալ պիեսի բեմադրությունը։

Ներկայացումը տրվում է 1867 թվի փետրվարի 28-ին։

Երեկոն կազմակերպողները մամուլում հրապարակած իրենց հայտարարության մեջ զգուշացել են Մ. Նալբանդյանի անունը տալուց։ Անա այդ ներկայացման հայտարարությունը ամբողջությամբ։

«Թատրոն Նաում

1867 փետրվ. 28 երեքշաբթի դիշ. ժամը 2-ին[1]
փառավոր ներկայացում Ասիական ընկերության
հանդես ազգային

ՎԱՐԴԱՆ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

փրկիչ հայրենյաց

Ողբերգություն երգչական ի վեց արարվածս
Հեղինակություն՝ պ. Ռ. Սեմեֆճյանի
Երաժշտություն՝ պ. Տ. Զուխաճյանի

Միջերգ

Տաղերգություն ի Վիրգինիա Գարագաշյանից։

Վերջին տողը ուշագրավ է։ Ի՞նչ տաղերգություն է, որ արտասանել է տպագա դերասանուհի, այդ օրերին տասնամյա Վերգինե Գարագաշյանը։ Ինչու չի հիշատակված արտասանվելիք տառնավորի անունը, ինչպես կատարվում էր առհասարակ։ Դրա պատասխանը տալիս է նույն ներկայացման հաջորդ հայտարարությունը։

[1] Այսինքն՝ ժամը երեկոյան 8-ին։

Բանն այն է, որ Երևկոն անցնում է արտակարգ հաջողությամբ, մեծ խանդավառություն առաջացնելով հատկապես Երիտասարդության մեջ, որը պահանջում է կրկնել այն ամբողջ ծրագրով։

Երևկոն նախաձեռնողները՝ կազմակերպում են երկրորդ ներկայացումը, արդեն որոշակիորեն մամուլում գրելով, որ այն նվիրված է Միքայել Նալբանդյանի հիշատակին, ինչպես այդ երևում է հետևյալ հայտարարությունից.

«Հանդես ազգային։ «Վարդան Մամիկոնյան»։ Այս ընտիր և սրատագրավ ողբերգության առաջին ներկայացումը մեծ գոհունակությամբ ընդունվելով թատերասեր հասարակությունեն, այս իրիկուն, մարտ 11, ի խնդիր բազմաթիվ ազգայնոց, երկրորդ անգամ պիտի ներկայացվի Նաումի թատրոնի մեջ, ավելի փառավոր կերպիվ, ի հիշատակ պ. Մ. Նալբանդյանցի, որուն վրա այլ նաև գեղեցիկ բանախոսություն մը և իր մեկ գողտրիկ տաղերգությունը պիտի արտասանվին Գարագաշյան օրիորդներեն։[1]

Պարզվում է, որ այդ «գողտրիկ տաղերգությունը» Նալբանդյանի «Երգ ազատության» բանաստեղծությունն է, որ արտասանել է Վ. Գարագաշյանը նախորդ և այդ ներկայացման ժամանակ։

Այստեղ, սակայն, ավելի կարևոր է Նալբանդյանի մասին արտասանված «գեղեցիկ բանախոսությունը», որի մասին հիշատակում է հայտարարությունը։ Բանախոսություն արտահայտությունը գործածվում էր զեկուցում բառի փոխարեն։ Ուրեմն, պարզվում է, որ այդ երեկո ոչ միայն արտասանվել է «Երգ ազատության» ոտանավորը, այլև տրվել է հատուկ զեկուցում, նվիրված Մ. Նալբանդյանի կյանքին ու գործունեությանը։ Իսկ ով է եղել հիշյալ «բանախոսության» հեղինակը։ Թվում է, թե պետք է լիներ «Մեղվի» խմբագիր Հ. Սվաճյանը, սակայն կան տեղեկություններ, որ այն գրել է «Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց» պիեսի հեղինակ, դրամատուրգ Ռ. Սեուֆճյանը։ Կասկածից վեր է, որ Հ. Սվաճյանը ակտիվ կերպով մասնակցել է ներկայացման կազմակերպմանը։ Գուցե ինքն էլ գրել է բանախոսությունը, սակայն քաղաքական նկատառումներով իրեն պահել է վարագույրի հետևում, չֆնասելու համար «Մեղվին» ու նրա շուրջ համախմբված իսկապես «Նալբանդյանացող» մարդկանց։

Որ Սվաճյանը ամենամոտիկ մասնակցություն ուներ «Արևելյան թատրոնի» գործերին, երևում է այն բանից, որ ինքն էլ գրել է մի պատմական ողբերգություն «Առանձար Ամատունի» խորագրով, որը մեծ հաջողությամբ բեմադրվեց նույն թվի հունվար ամսին։ Ժամանակի թերթերը ջերմ տողեր են նվիրել դրան և այն համարել են աննախընթաց գործ, նորություն հայ դրամատուրգիայում։ «Առանձար Ամատունու» ներկայացման օրն էլ մի գեղատի աղջիկ «Երգ մ'այ» երգել է։ Արդյոք այս ներկայացումը որևէ բանով կապվել է Նալբանդյանի անվան հետ, հիշյալ երգը արդյոք նույն «Երգ ազատությանը» չէ։ Դժբախտաբար ոչինչ չի հասել մեզ այս մասին։ Ինչ էլ լինի, ակնբախ է մի բան, որ «Վարդան Մամիկոնյան» ներկայացման նախաձեռնությունը պատկանում է «Մեղվականներին», գուցե անձամբ Սվաճյանին։

Մեզ չի հասել արտասանված «բանախոսության» տեքստը։

Առայժմ անհայտ է մնում, թե «բանախոսության» հեղինակը Նալբանդյանի հասարակական-քաղաքական և գրական գործունեության որ կողմերն է արժևորել։

[1] «Մասիս», 1867 թ., մարտի 11։

Հայտնի է, որ Ռ. Սեսեֆճյանը պատկանել է հայ բուրժուազիայի լիբերալ սահմանադրական թևին։ Նրա ստեղծագործություններից ոչ մեկը մեզ չի հասել, սակայն նույն այդ «Վարդան Մամիկոնյան» պիեսի մի տողը («Հայերն հայրենյաց համար մեռնիլ գիտեն, բայց միաբանիլ չեն գիտեր»), որի վրա ժամանակի մամուլը հատուկ ուշադրություն է դարձրել և մեջ է բերել այն, ցույց է տալիս, որ Սեսեֆճյանը եղել է նույն այն բուրժուական մտածողներից, որոնք՝ վեր հանելով հանդերձ հայ ժողովրդի անցյալի փառավոր էջերը, հայրենիքի պաշտպանության համար նրա մղած պայքարը, հայ ժողովրդի տառապանքի, դժբախտության պատճառը համարում էին անմիաբանությունը, առանց խորանալու, գնահատել կարողանալու դրա սոցիալական քաղաքական էությունը։

Ճիշտ է, պատմական ովյալ պայմաններում, երբ հայ ժողովրդի արևմըտահայ հատվածը քաղաքական-ազատագրական պայքար էր մղում սուլթանիզմի դեմ, Սեսեֆճյանի և ուրիշների պիեսները կատարում էին դրական որոշ դեր, կոչ անելով կյանքի գնով պաշտպանել Հայրենիքը,—որի համար պիեսի վերոհիշյալ արտահայտությունը մեծ օվացիա է առաջացրել հանդիսականների մեջ, «ծափահարությանց ու դոռուոցներու արժանացելը»—սակայն, այդ բոլորով հանդերձ, Նալբանդյանի մասին կարդացված հիշյալ զեկուցման գտած ընդունելությունը վկայում է, որ նա իր գաղափարական բովանդակությամբ ու խորությամբ շատ ավելի նշանակալից մի խոսք է եղել, քան կարող էր գրել չափավոր հայացքների տեր Ռոմանոս Սեսեֆճյանը։ Ուստի հնարավոր է ենթադրել, որ այն գրել է «Մեղվի» խմբագիր Հ. Սվաճյանը։

Փաստն այն է, որ Միքայել Նալբանդյանի մասին արտասանված «բանախոսությունը» այնքան մեծ խանդավառություն է առաջացրել հանդիսականների մեջ, որ նրանք միահամուռ կերպով պահանջել են երրորդ անգամ կրկնել ներկայացումը, և որ ամենից կարևորն է, կրկնել տենց վերոհիշյալ «բանախոսությունը», որը աննախընթաց երևույթ էր պոլսական պայմաններում։

Հիշյալ հետաքրքիր ներկայացման երրորդ անգամ կրկնվելը հայտնող հայտարարության մեջ կարդում ենք.

«Վարդան Մամիկոնյան, փրկիչ հայրենյաց»[1] հատընտիր ողբերգությունը երրորդ անգամ պիտի ներկայացվի ապրիլ 6 հինգշաբթի գիշեր։ Նաև ի տիշատակ Մ. Նալբանդյանցի հորինված ճառը վերստին պիտի ատենաբանե օր. Ե. Գարագաշյան, առաջին դերասանուհին, ըստ խնդրանաց բազմաթիվ հասարակության»[2] (ընդգծումը մերն է.—Գ. Մա.)։

Ինչ-ինչ նկատառումով խումբը հնարավորություն չի ունենում իր հայտարարած օրը, այսինքն ապրիլի 6-ին կազմակերպել երեկոն, հարկադրված է լինում այն երկու օրով հետաձգել։ Մամուլում այդ առթիվ տպված հայտարարության մեջ ասվում է, թե հետաձգվում է «օդին ավերվելուն պատճառով»։

---

[1] Ուշագրավ է, որ հետագայում Մ. Նալբանդյանի Թիֆլիսում և Երևանում հայտնաբերված արդեվված նկարների վրա էլ եղել է «Մ. Նալբանդյանց, փրկիչ հայրենյաց» մակագրությունը։ (Տես Ե. Նահապետ. Դիվան Մ. Նալբանդյանի, էջ 362)։

[2] «Մասիս», 1867, մարտի 30։

Այդ նույն ներկայացման օրերին ձեռնարկվում է Նալբանդյանի նկարի և նրա «Երգ ազատության» ոտանավորի տպագրման գործին, այն մարդկանց պահանջով, որոնք ձեռքից ձեռք արտագրում, և բպմացնում էին «Երգը» և ցանկանում էին ունենալ նրա հեղինակի լուսանկարը։ Ուստի, հնարավոր է ենթադրել, որ երեկոն հետաձգվել է ոչ թե «օդին ավրվելուն պատճառով», այլ գուցե ժամանակ շահելու համար, որպեսզի նկարի տպագրությունն ավարտվի և հնարավոր լինի բաժանել կամ ծախել ներկայացման օրը։

Մեր այս ենթադրությունը հաստատում է այն փաստը, որ նույն ապրիլի 6-ին, այսինքն երեկոյի հետաձգումը հայտարարված օրը, մամուլում հրապարակվում է մի «Ծանուցում», որտեղ կարդում ենք.

«Մոսկվայի «Հյուսիսափայլ» լրագրի նախկին խմբագիր հանգուցյալ Մ. Նալբանդյանցի լուսանկար պատկերը՝ որուն ներքև Ազատության վրա իր հորինած գողտրիկ երգը տպված է, երեք դուրուշ գնով կծախվի»։[1]

Անկասկած նկարի տպագրությունը անմիջապես առնչվում է հիշյալ ներկայացման հետ և պատահական զուգադիպությամբ չէ, որ այն տարածվել է նույն այդ օրերին։

Վերոհիշյալ ծանուցումը ուշագրավ է նաև մի այլ տեսակետից. այն ցույց է տալիս, թե ինչպես հեռավոր Պոլսում «Հյուսիսափայլը» հայտնի էր Մ. Նալբանդյանի միջոցով, Նալբանդյանին էին ճանաչում պրոգրեսիվ մտածողները որպես այդ պարբերականի խմբագրի։ «Հյուսիսափայլի» էջերից «Մեղուն» մեծ սիրով արտատպում էր Նալբանդյանի ստեղծագործությունները։

Թե Նալբանդյանին նվիրված երեկոն կազմակերպողները ինչպիսի մեծ նշանակություն են տվել այդ նախաձեռնությանը, երևում է նաև այն բանից, որ նրանք ցանկացել են ոչ միայն նոր և ինքնուրույն մի պիեսի բեմադրությամբ, Նալբանդյանին նվիրված հատուկ վեկուցումով նշանավորել այդ արժանահիշատակ օրը, այլև ներկայացմանն ու հանդիսավոր բաժնին մասնակից դարձնել լավագույն կատարող ուժերի։ Դրա համար նրանք պիեսի բեմադրության համար հրավիրել են ժամանակի հայտնի դերասան-դերասանուհիներին, նաև մի քանի նոր այնպիսի ուժերի, որոնք նախորդ մի քանի ամիսների ընթացքում դրսևորել էին իրենց բեմական ընդունակությունները։ Նրանց բեմական գործունեության սկիզբը կապված է «Վարդան Մամիկոնյան» պիեսի բեմադրության հետ։ Դրանցից են՝ Պետրոս Ագամյանը, Երանուհի և Վիրգինիա Դարագաշյան քույրերը, կոմիկ դերասան Գարեգին Ռշտունին։ Սրանք, որոնք բոլորն էլ, որ հետագայում դարձան աչքի ընկնող դերասաններ, առաջին անգամ բեմ են բարձրացել վերոհիշյալ պատմական ներկայացման ժամանակ։

Նալբանդյանի համախոհների և գաղափարակիցների կողմից Պոլսում 1867 թ. փետրվար ամսին կազմակերպված երեկոն, որը կրկնվել է մի քանի անգամ, կարևոր իրադարձություն էր և, հասկանալի է, որ չէր կարող չգրավել սուլթանական կառավարության ուշադրությունը։

Կառավարությունը այդ ներկայացումից անմիջապես հետո փակում է Սր. Հեքիմյանի ղեկավարությամբ գործող «Արևելյան թատրոնը», ցրում

[1] «Մասիս», 1867, ապրիլի 6։

է խումբը, իսկ թատրոնի շենքը հանձնում է մի ֆրանսիական թատերախմբի։ Այս մասին ժամանակի մամուլում չի գրված և ոչ մի տող։ Շատ տասնամյակներ անց,—նույն թյուրքական խիստ գրաքննության պայմաններում տպված մի տարեցույցում հանդիպում ենք հիշյալ պատմական ներկայացման շատ հարևանցի նկարագրությանը։ Այդ հոդվածում կարդում ենք.

«Այս ներկայացումը վերջինը կըլլա 1866—67-ի տարեշրջանին և վերջինը միանգամայն Հեքիմյանի վարչության տակ տրված ներկայացմանց։ ...1867—68-ի տարեշրջանին Սր. Մանասյան կշարունակե վարել ֆրանսիական թատրոնի վերածված «Արևելյան թատրոնի» ֆրանսական խումբին տնօրենությունը»[1]

Այսպիսով, 1867 թ. փետրվար-ապրիլ ամիսներին Պոլսում կազմակերպված այս ներկայացումը ուշագրավ երևույթ է Նալբանդյանի դաստիարակական ազդեցության շրջանակները որոշելու տեսակետից, և հանդիսանում է հայ թատրոնի պատմության հետաքրքիր էջերից մեկը։

1 Ընդարձակ տարեցույց, 1927 թ., էջ 281։